ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2026 թվականի N 419 -Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ԵՎ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 127-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի N 67-Ա որոշման 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի N 24-Ա և թիվ 25-Ա որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք և Ամասիա համայնքների ավագանիների համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունները նշանակել 2026 թվականի նոյեմբերի 29-ին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք և Ամասիա համայնքների ղեկավարներին՝

1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը հրապարակվելուց հետո միջոցներ ձեռնարկել

տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված գործառույթների պատշաճ իրականացման ուղղությամբ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի և Ամասիայի համայնքապետարաններ, Հայաստանի Հանրապետության թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է